

Մետատվյալների փաստաթղթավորման դաշտեր

Հայաստան ԱԳՐԻՍ_SAH 2020

Փաստաթղթի նկարագրություն

Մետատվյալների արտաձողը/ստեղծողը

Արմատատ, գյուղատնտեսության և պարենային ապահովության բաժին

Արտաձելու/ստեղծելու ամսաթիվը

13.10.2021թ.

DDI փաստաթղթի տարբերակ

V-1

DDI փաստաթղթի ID համար

1-ին փաստաթուղթ

Ուսումնասիրության նկարագրություն

Նույնականացում

AGRIS/SAH

Անվանում

AGRIS/SAH

Հապավում

AGRIS/SAH

Ուսումնասիրության տեսակը

Գյուղացիական տնտեսությունների ընտրանքային հետազոտություն

Շարքի/սերիայի մասին տեղեկություն. Նշեք, որ սա առաջին AGRIS հետազոտությունն է և Գյուղացիական տնտեսությունների հարցումը դրա մի մասն է: Նշեք նաև ԱԳՐԻՍ-ի այլ կոմպոնենտների մասին:

2020թ. հունվարից ՀՀ վիճակագրական կոմիտեն (Արմստատ) ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ համատեղ հանրապետության 4 մարզերի անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններում եռամսյակային և տարեկան պարբերականությամբ անց է կացրել Գյուղատնտեսական ինտեգրված ընտրանքային հետազոտություն (AGRIS): ՀՀ-ում ԱԳՐԻՍ ծրագիրն իրականացվել է առաջին անգամ: Հետազոտության հիմնական նպատակը Հայաստանի Տնտեսությունների գյուղատնտեսական գործունեության ուսումնասիրությունն էր: Գյուղատնտեսության ոլորտի մասին հնարավորինս ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ էր մանրամասն հարցում իրականացնել տարբեր Տնտեսություններում և ընդհանրացնելով տրամադրված տեղեկություններն ունենալ Հայաստանում Տնտեսությունների և գյուղատնտեսության ոլորտի վիճակագրական նկարագիրը: Հետազոտության արդյունքում հավաքված տվյալները կարող են օգտագործվել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված համապատասխան քաղաքականության մշակման համար: Նշված ծրագրի շրջանակում նախատեսվում է հավաքել նաև գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից:

Նույնականացման համար

Տարբերակ

Նկարագրություն

Ստեղծման/արտածման ամիս-ամսաթիվ

Նշումներ

Ընդհանուր ակնարկ

Աբստրակտ. այն պեղք է տա հետազոտության նպատակների և բովանդակության մասին պարզ պատկերացում: Այն պեղք է գրված լինի հետազոտողի կամ հետազոտության վիճակագրի կողմից, ով լավ տեղյակ է հետազոտությունից:

Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտությունն անց է կացվել գյուղատնտեսության ոլորտի և տնտեսությունների մասին վիճակագրական տեղեկատվության հավաքման նպատակով, հավաքված տվյալները կարող են օգտագործվել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված համապատասխան քաղաքականության մշակման համար:

Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության հարցումը հարցազրուցավարն անց է կացրել Համակարգչային օժանդակությամբ անհատական հարցազրույցի (CAPI) համակարգի (SuSo) հավելվածի միջոցով՝ օգտագործելով հետևյալ թվայնացված հարցաթերթերը.

1. «Մեկնարկային հարցաթերթ»
2. «Եռամսյակային հարցաթերթ»
3. «Տարեկան հարցաթերթ»

Հարցաթերթերը լրացվել են հարցազրուցավարի կողմից, տարվա ընթացքում տնտեսություններ կատարած այցերի ընթացքում, տնտեսության գլխավորի/կառավարչի կամ տնտեսության գյուղատնտեսական աշխատանքներին քաջատեղյակ չափահաս (18 տարեկանը լրացած) անդամի հետ անմիջական հարցազրույցի միջոցով: Հարցազրուցավարը հավաքել է տեղեկատվություն տնտեսության կարգավիճակի, հողերի չափերի, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, արտադրված գյուղատնտեսական արտադրանքի, դրանց վերամշակման, սպառման, իրացման, աշխատուժի, շենք-շինությունների և այլնի վերաբերյալ:

Տվյալների տեսակը

Վերլուծության միավորը

Հետազոտության շրջանակը

Հետազոտության շրջանակի նկարագրություն

Այն ներառում է հարցման թեմաների նկարագրությունը: Այն կարող է դիտարկվել որպես հարցաթերթի մոդուլների կարճ նկարագրություն: Այն չի ներառում աշխարհագրական ծածկույթը:

Նշված ծրագրի շրջանակում հարցազրուցավարը տնտեսություններ այցելությունների միջոցով հավաքում է տեղեկատվություն.

Տնտեսության՝ գտնվելու վայրի, գլխավորի, գործունեության ուղվածության վերաբերյալ, ինչպես նաև տնտեսությունում առկա՝ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, անասնաբուծական արտադրանքի արտադրության տեսակների, դրանց ծավալի, հողակտորների քանակի, դրանց մշակման, արտադրված բուսաբուծական արտադրանքի, դրանց ծավալի, արտադրված արտադրանքի իրացման ուղղությունների, ոռոգման տեսակների, պարարտանյութերի, աշխատուժի, կատարված ծախսերի և այլնի վերաբերյալ:

Օրինակ՝

Մի քանի ցուցանիշ ունեցող կլաստերային հարցումը ներառում է՝

- ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: տնտեսության նկարագրություն, տնտեսության ցուցակագրում, որբ և խոցելի երեխաներ, կրթություն, մանկական աշխատույժ, ջուր և սանիտարական մաքրում, տնտեսության միջատասպան օգտագործելը, աղի յոդացում, երեխաների կարգապահություն, մանկական հաշմանդամություն, մայրական մահացություն և բնակարանների պահպանման և ամրության ապահովման ընտրովի մոդուլները:
- ԿԱՆԱՅՔ. Կանանց նկարագրություն, մանկական մահացություն, տետանուսային տոքսոֆիդ, մայրական և նորածնային առողջություն, ամուսնություն, բազմակնություն և այլն
- ԵՐԵԽԱՆԵՐ. Երեխաների նկարագրություն, ծննդյան գրանցում և նախադպրոցական կրթություն, վիտամին A, կրծքով կերակրում, հիվանդությունների ժամանակ խնամք, մալարիա, իմունիզացիա և անտրոպոմետրիա՝ երեխայի զարգացման համար ընտրովի մոդուլով:

Թեմաների դասակարգումը

Ծածկույթը

Երկիրը

Աշխարհագրական ծածկույթ

Այս փաստաթուղթը նպատակ ունի նկարագրել, թե աշխարհագրական մակարդակում որ տվյալները են ներկայացուցական: Տիպական գրառումներ՝ «Ազգային մակարդակ», «Միայն քաղաքային (կամ գյուղական) տարածքներ», «...նահանգ», «Մայրաքաղաք» և այլն:

Նկատի ունեցեք, որ մենք այստեղ չենք նկարագրում, թե որտեղ են հավաքվել տվյալները: Օրինակ, քանի որ ընտրանքային հետազոտությունը կարող է հայտարարվել որպես «ազգային մակարդակ» նույնիսկ այն դեպքերում, երբ որոշ հատվածներ ընդգրկված չեն ընտրանքում, եթե ընտրանքը կատարված է այնպես, որ ներկայացուցականությունը ապահովվի:

Ազգային և ընտրված մարզային մակարդակ:

Տարածումը

Մենք հետաքրքրված ենք հետազոտության տարածվածությամբ (ոչ թե հարցաթերթի որոշակի բաժինների կամ փոփոխականների): Ընտրանքային տնայտին տնտեսությունների հարցումները օրինակ սովորաբար չեն անդրադառնում անտուններին, քոչվորներին, դիվանագետներին, համայնքային տնտեսություններին: Համատարած հաշվառումները՝ դիվանագետներին: Փորձեք տալ հնարավորինս ամենադետալային նկարագրությունը, թե կոնկրետ ում մասին է հարցումը/հաշվառումը:

Օրինակ՝

Հարցումն ընդգրկել է տան բոլոր մշտական անդամներին (սովորաբար այնտեղ բնակվող), տնային տնտեսությունում բնակվող 15-49 տարեկան բոլոր կանանց և տնային տնտեսությունում բնակվող 0-4 տարեկան (5 տարեկանից փոքր) բոլոր երեխաներին:

Հարցումներն իրականացվել են գյուղացիական տնտեսություններում, անկախ նրանց չափից, ընտանիքի անդամների թվից, գործունեության

ուղվածությունից, արտադրված արտադրանքի իրացման ուղղություններից և այլն:

Ստեղծողներ և ֆինանսավորողներ

Առաջնային ստեղծողներ

FAO և Արմատատ

Այլ ստեղծողներ

ICARE

Ֆինանսավորում

FAO

Այլ շնորհակալական խոսքեր

Դաշտ, որը լրացվում է ըստ ցանկության: Այն լրացվում է այն դեպքում եթե ցանկություն ունեք շնորհակալություն հայտնելու մարդկանց/կազմակերպությունների, որոնք որևէ կերպ օժանդակել են հարցմանը:

Շնորհակալություն՝ FAO, ICARE աշխատակիցներ՝ Արմեն, Ավետ, Հասմիկ, Լուսինե և այլն:

Տվյալների հավաքում

Հավաքելու ամսաթիվը

Աշխատանքային գործիքները եղել են նախատեսված հետևյալ 3 հարցաթերթերը՝
1. «Մեկնարկային հարցաթերթ» հունվարի 1-ի դրությամբ,
2. «Եռամսյակային հարցաթերթ», տարվա մեջ 2 անգամ կատարել տնայցեր,
3. «Տարեկան հարցաթերթ» տարվա ավարտից հետո, հունվարին:

Քանի որ, ՀՀ-ում Կոռուպցիայի կանոնադրական պայմանավորված իրականացվեցին սահմանափակումներ և նույն տարում տեղի ունեցավ 44 օրյա պատերազմը, վերը թվարկված գործիքակազմը փոխվեց՝ կրճատվեց:

1. «Մեկնարկային հարցաթերթ» հունվարի 1-ի դրությամբ
2. «Կիսամյակային հարցաթերթ» 1-ին կիսամյակի ավարտին հաջորդող ամսում
3. «Տարեկան հարցաթերթ» տարվա ավարտից հետո, հունվարին

Հղումային ժամկետները

«Մեկնարկային հարցաթերթ»-ի հղումային ժամկետն էր հունվարի 1-ի դրությամբ առկան, այն ներառում էր նաև 2019թ-ի աշնանացանները: «Կիսամյակային հարցաթերթ»-ի հղումային ժամկետներին էին 2020թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակները (հունվարի 1-ից մարտի 31-ը, ապրիլի 1-ից հունիսի 30-ը)

«Տարեկան հարցաթերթ»-ի հղումային ժամկետներին էին 2020թ-ի 3-րդ և 4-րդ եռամսյակները (հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը, հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը):

Տվյալների հավաքման տարբերակները

Տվյալների հավաքման մասին գրառումներ. նշեք բոլոր ուժեղ

կողմերը/լավագույն պրակտիկան/խնդիրները/անհանգստությունները, որը ազդել է տվյալների հավաքման վրա:

Հարցազրուցավարների և սուպերվայզերների հետ դաշտային աշխատանքների մեկնարկից առաջ ուսուցումների կազմակերպում:

Հարցազրուցավարների և սուպերվայզերների կողմից նախորդ դաշտային աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խնդիրների բացահայտում, դրանց լուծումների ներկայացում, քննարկումներ, փորձի փոխանակում:

Հարցազրուցավարների, սուպերվայզերների և ղեկավարների միջև ծրագրային մշտական կապի առկայություն դաշտային աշխատանքների ընթացքում:

CAPI ծրագրի Suso հավելվածի միջոցով հարցազրուցավարների պողմից հարցաթերթերի արագ մուտքագրում և տվյալների վերահսկում սուպերվայզերների ու ղեկավարների կողմից:

Ընտրանքում ընդգրկված տնտեսություններում բացակա տնտեսությունների/փակ դռների/հրաժարումների մեծ թիվ, որի արդյունքում ընտրված հասցեները փոխվում

են պահուստային հասցեներով, լրացուցիչ ժամանակ է ծախսվում նոր հասցեները գտնելու և տնտեսությանը հարցազրույցի պատրաստելու համար:
Համավարակի առկայություն, որի արդյունքում հնարավոր է դաշտային աշխատանքների հետաձգում, մարդկանց հետ շփումից խուսափելու արդյունքում տնտեսության հրաժարում ծրագրին մասնակցությունից:

Հարցաթերթեր. Նշեք փոփոխությունները, որոնք արվել է ՊԳԿ-ի տրամադրած կադապարային հարցաթերթի վրա և ով է օժանդակել հարցաթերթի վերջնականացման վրա:

ՊԳԿ կողմից Արմատատին տրամադրված հարցաթերթի բոլոր բաժինների շուրջ տեղի են ունեցել քննարկումներ Արմատատի, FAO-ի և ICARE փորձագետների միջև նպատակ ունենալով համապատասխանեցնել բաժիններում առկա ցուցանիշները ազգային առանձնահատկություններին, մասնավորապես՝ հարցաթերթում ներառված մշակաբույսերի ցանկի գյուղատնտեսական կենդանիների սեռատարիքային խմբի ճշգրտում և այլն:
Հարցաթերթի վերջնականացման աշխատանքներին մեծ օժանդակություն են ցուցաբերել FAO փորձագետները, ICARE աշխատակիցներ՝ Արմենը, Ավետը, Հասմիրը, Լուսինեն և այլք:

Տվյալներ հավաքողները

Այս դաշտը տրամադրված է տվյալների հավաքումը ստանձնած անձանց և (կամ) գործակալությունների վերաբերյալ տեղեկությունների գրանցման համար: Այն ներառում է 3 դաշտ՝ Անուն, հապավում և պատկանելիություն (եթե օրինակ բաժնի մասին ենք խոսում, ուրեմն գրում ենք գործակալության անունը այս հատվածում): Շատ դեպքերում մենք այստեղ գրանցելու ենք գործակալության անունը, այլ ոչ թե հարցազրույց անողների: Միայն շատ փոքրածավալ հարցումների դեպքում, շատ սահմանափակ թվով հարցազրուցավարների դեպքում, անձի անունը նույնպես ներառված կլինի: Պատկանելիությունը պարտադիր չէ և ոչ բոլոր դեպքերում է տեղին:

Օրինակ՝

Կենտրոնական վիճակագրական գրասենյակ

Հապավումը՝ ԿՎԳ

Պատկանելիությունը՝ Պլանավորման նախարարություն

ՀՀ վիճակագրական կոմիտե

Հապավումը՝ Արմատատ

Պատկանելիությունը՝ ՀՀ Կառավարությանը ենթակա

Ղեկավարություն

Տրամադրում է ինֆորմացիա տվյալների հավաքման մասին: Հաշվի պետք է առնվի հետևյալը՝

- Արդյո՞ք հաշվարարները ունեցել են խումբ/թիմ՝ ներառյալ վերահսկող և սուպերվայզր: Խմբում քանի հաշվարար, վերահսկող և սուպերվայզր է եղել:
- Ո՞րն է եղել վերահսկողների և սուպերվայզրների դերը
- Արդյո՞ք ղեկավարները մասնակցել են դաշտային աշխատանքներին, որքա՞ն հաճախ:

Օրինակ՝

Հարցումը իրականացվել է հարցազրուցավարների թիմի կողմից: Յ-ր հարցազրույց իրականացնող թիմ կազմված էր 3-4 իգական սեռի հարցազրուցավարներից, դաշտային խմբագրողից, ղեկավարից (սուպերվայզրից) և վարորդից: Յ-ր թիմ օգտագործել է քառանիվ փոխադրամիջոց՝ կլաստերից կլաստեր տեղափոխվելու համար (ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կլաստերի ներսում տեղափոխվելու համար):

Սուպերվայզրի դերը տվյալների հավաքման դաշտային աշխատանքների համակարգումն էր՝ ներառյալ դաշտում աշխատող թիմի, ներդրանքների և սարքավորումների, ֆինանսական միջոցների, քարտեզների և ցուցակագրումների համակարգումը, ինչպես նաև տեղական մարմինների հետ հարցման պլանների քննարկում/համակարգումը, գիշերակացի և ճանապարհորդության հետ կապված պայմանավորվածությունների ձեռքբերումը: Ի լրումն դրան, հարցազրուցավարներին հանձնարարություններ տալիս էր սուպերվայզրը, տեղում ստուգում էր

աշխատանքը, պահպանում էր դաշտային աշխատանքների վերահսկման փաստաթղթերը, և ուղարկում էր լրացված հարցաթերթերը և առաջընթացի մասին հաշվետվությունները կենտրոնական գրասենյակ: Դաշտային խմբագրողի պարտականությունն էր վերանայել յ-ր հարցաթերթ օրվա ավարտին, ստուգել բացթողնված հարցերը, բացթողնված սխալները, սխալ լրացված դաշտերը, և ստուգել տվյալներում անհամապատասխանությունները: Դաշտային խմբագրողը նաև դիտարկում էր հարցազրույցները և իրականացնում էր վերանայման սեսիաներ հարցազրուցավարների հետ:

Հարցազրուցավարի և սուպերվայզրի պատրականությունները նկարագրված են «Հրահանգներ սուպերվայզրների և դաշտային խմբագրողների համար» փաստաթղթում: Ի լրումն սրան տարբեր դաշտային վերահսկողներ տեղում էին հսկելու դաշտային աշխատանքների որակը:

Դաշտային այցերը կատարվել են նաև դաշտային աշխատանքների ժամանակ, կենտրոնական գրասենյակի աշխատակիցների կողմից՝ պարբերական կերպով: GenCenStat-ի ավագ աշխատակիցները ևս երեք անգամ այցելել են դաշտում աշխատող թիմին, տրամադրելու խորհրդատվություն և գնահատելու առաջընթացը:

4 խումբ, 7 վերահսկող, 19 սուպերվայզեր, 111 հաշվարար Հաշվարարները տնտեսություններից հարցման միջոցով հավաքել են տվյալներ, սուպերվայզերները ստուգել են հարցաթերթերի ամբողջականությունն ու լրացված տվյալների արժանահավատությունը, վերահսկողները վերահսկել են աշխատանքների իրականացման ժամանակացույցը, ինչպես նաև սուպերվայզերների կողմից իրականացված արժանահավատության ստուգման աշխատանքները:

Տվյալների մշակում

--

Տվյալների խմբագրում

Տվյալների խմբագրումը պետք է պարունակի տեղեկություն այն մասին, թե ինչպես են աշխատել տվյալների հետ կամ վերահսկել՝ հետևողականության և ներդաշնակության ապահովման համար: Սա չի վերաբերում տվյալների մուտքագրմանը, այլ միայն խմբագրմանը՝ լինի ձեռքով թե ավտոմատ կերպով:

- Hot deck թե Cold deck տեխնիկան է օգտագործվել իմպուտացման համար (բացակայող տվյալների լրացման համար)
 - Ուղղումները արվե՞լ են ավտոմատ (ծրագրի կողմից), թե՞ աչքի անցկացնելով:
 - Ի՞նչ ծրագրակազմ է օգտագործվել:
- Եթե կան փաստաթղթեր (խմբագրման վերաբերյալ հաշվետվություններ կամ խմբագրման մեջ օգտ. ծրագրակազմեր), պետք է նկարագրվեն այստեղ և ներկայացվեն որպես արտաքին ռեսուրսներ:

Օրինակ՝

Տվյալների խմբագրում իրականացվել է մշակման բազմաթիվ փուլերում ներառյալ.

- a) Գրասենյակային խմբագրման և կոդավորման
- b) Տվյալների մուտքագրման
- c) Կառուցվածքի և ամբողջականության ստուգման
- d) Երկրորդային խմբագրման
- e) SPSS-ի տվյալների ֆայլերի կառուցվածքային ստուգման

Տվյալների խմբագրման մանրամասն փաստաթղթավորումը կարող եք գտնել «Տվյալների մշակման ուղեցույց» փաստաթղթում, որը տրված է որպես արտաքին ռեսուրս:

Հաշվարարների կողմից տրամադրված տվյալները սուպերվայզերների կողմից ստուգվում էին և ըստ անհրաժեշտության մեկնաբանությունների միջոցով իրականացվում էր հարցումների ճշտում, մերժվում էր հարցաթերթը: Նույն սկզբունքով աշխատում էին վերահսկողները սուպերվայզերների հետ: Համակարգչային ծրագիրը հնարավորություն էր տալիս վերահսկել թվաքանական և տրամաբանական:

Այլ մշակում

Օգտագործեք այս դաշտը տրամադրելու այնքան շատ ինֆորմացիա, որքան հնարավոր է տվյալների մուտքագրման գործընթացի մասին:

- Ինչպես է կատարվել մուտքագրումը՝ ձեռքով կամ սկանավորելով, դաշտային աշխ.-ի ժամանակ, մարզերում թե գլխամասում:
- Համակարգիչների առկայությունը, նշեք ինչ սարքեր են օգտագործվել և քանի հատ:
- Օգտագործված ծրագրակազմ

- Տվյալների կրկնամուտքագրում (%)
- Տվյալների մուտքագրման օպերատորների միջին արտադրողականությունը. տվյալների մուտքագրման օպերատորների թիվը և նրանց աշխատանքային գրաֆիկը

Տաբուլյացիաների և վերլուծությունների մասին տվյալները ևս կարող են նշվել այստեղ:

Բոլոր առկա նյութերը (տվյալների մուտքագրում/տաբուլյացիա/վերլուծության ծրագրեր, տվյալների մուտքագրման հաշվետվություններ) պետք է նշված լինեն այստեղ և տրամադրվեն որպես արտաքին ռեսուրսներ:

Օրինակ՝

Տվյալները մշակվել են կլաստերներով, յ-ր կլաստեր մշակվել է որպես ամբողջական միավոր տվյալների մաշկման յ-ր փուլում: Յ-ր կլաստեր անցնում է հետևյալ քայլերով.

- 1) Հարցաթերթի ստացում
- 2) Գրասենյակային խմբագրում և կոդավորում
- 3) Տվյալների մուտքագրում
- 4) Կառուցվածքի և տվյալների ամբողջականության ստուգում
- 5) Ստուգման մուտքագրում
- 6) Ստուգման տվյալների համեմատություն
- 7) Հում տվյալների կրկնօրինակների պահպանում (back up)
- 8) Երկրորդային խմբագրում
- 9) Խմբագրված տվյալների կրկնօրինակների պահպանում

Դրանից հետո մշակվում են բոլոր կլաստերները, համակցվում են բոլոր տվյալները, և հետո կատարվում են հետևյալ քայլերը

- 10) Արտածել դեպի SPSS՝ 4 ֆայլով (hh – տնային տնտեսություն, hl – տնային տնտեսության անդամներ, wm – կանայք, ch – երեխաներ 5 տարեկանից ցածր)
- 11) Վերլուծության համար անհրաժեշտ փոփոխականների գրանցում
- 12) Ընտրանքի կշիռների ավելացում
- 13) Հարստության կվանտիլների հաշվարկ և ավելացում տվյալներում
- 14) SPSS ֆայլերի կառուցվածքային ստուգում
- 15) Տվյալների որակի տաբուլյացիա
- 16) Վերլուծության տաբուլյացիաների ստեղծում

Այս քայլերի մանրամասները կարելի է գտնել տվյալների մշակման փաստաթղթերում, տվյալների խմբագրման ուղեցույցներում, տվյալների

մշակման ծրագրերում, ինչպիսիք են CSPRO-ն և SPSS-ը, և տաբուլյացիաների ուղեցույցներում:

Տվյալների մուտքագրումը իրականացվել է տվյալների մուտքագրման երկու հերթափոխով աշխատող 12 օպերատորների կողմից, վերահսկել են 2 տվյալների մուտքագրման սուպերվայզորներ, օգտագործվել է 7 համակարգիչ (տվյալների մուտքագրման 6 համակարգիչ, ինչպես նաև 1 սուպերվայզորի համակարգիչ):

Տվյալների մուտքագրումը կատարվել է GenCenStat-ի գլխավոր գրասենյակում՝ օգտագործելով ձեռքի մուտքագրում: Տվյալների մուտքագրման համար օգտագործվել է CSPRO-ի 2.6.007 տարբերակը, որը ունի տվյալների մուտքագրման խիստ համակարգված ծրագիր, այն օգտագործում է համակարգի կողմից վերահսկվող մոտեցում, որը վերահսկում է j-ր փոփոխականի մուտքագրումը: Սանդղակների բոլոր ստուգումները և բաց թողումները վերահսկվում է ծրագրի կողմից և օպերատորները չէին կարող անտեսել դրանք: Սահմանափակ քանակով համապատասխանության ստուգումների էր ներառված տվյալների մուտքագրման ծրագրում: Ի լրումն սրա, մարդաչափական Z-միավորների հաշվարկը ևս ներառված էր տվյալների մուտքագրման ծրագրում՝ վերլուծության ժամանակ օգտագործելու համար: Բաց հարցերը («Այլ» պատասխանները) մուտքագրված կամ կոդավորված չեն եղել, բացառությամբ շատ հազվադեպ դեպքերի, երբ պատասխանները համապատասխանել են հարցաթերթում առկա կոդավորված պատասխաններին:

Կառուցվածքի և ամբողջության ստուգումը հավաստեց, որ կլաստերի բոլոր հարցաթերթերը մուտքագրված են եղել, կառուցվածքային առումով ճիշտ է եղել, կանանց և երեխաների հարցաթերթերը առկա են եղել j-ր համապատասխանող կնոջ և երեխայի համար: 100% փոփոխականների համար իրականացվել է անկախ ստուգում, այսինքն տվյալների երկակի մուտքագրմամբ, տվյալների առանձին համեմատությամբ, որին հաջորդել է տվյալների մեկ կամ երկու բազաների փոփոխություն՝ ուղղելու առաջին անգամ մուտքագրող օպերատորի կողմից արված սխալը:

CSPRO- ում բոլոր մշակումների ավարտից հետո բոլոր առանձին կլաստերային ֆայլերը կրկնօրինակվեցին և պահվեցին՝ նախքան տվյալները միացնելը, օգտագործելով CSPRO-ի ֆայլը միացնելու հնարավորությունը: Տաբուլյացիայի և վերլուծության համար SPSS-ի 10.0 և 14.0 տարբերակներն են օգտագործվել: 10.0 տարբերակը իսկզբանե

օգտագործվել է բոլոր տաբուլացիաների ծրագրերում, բացի մանկական մահացության դեպքում: Ավելի թարմ տարբերակը՝ 14.0-ն օգտագործվել է մանկական մահացության, տվյալների որակի տաբուլացիաների և այլ վերլուծական աշխատանքներում

Բոլոր ֆայլերը SPSS տեղափոխելուց հետո, որոշ փոփոխականներ վերակոդավորված են եղել, որպես ֆոնային նկարագրություն տվյալների տաբուլացիայի համար, ներառյալ խմբավորման տարիքը, կրթությունը, աշխարհագրական տարածքները ըստ անհրաժեշտության: Տարիքի և ամիս-ամսաթվերի վերակոդավորման ժամանակ իրականացվել են որոշ ամիս-ամսաթվերի պատահական իմպուտացիաներ (հաշվարկված սահմաններում), որպեսզի կարգավորվի բացակայող կամ «չգիտեմ» պատասխանները տարիքի կամ ամիս-ամսաթվերի դեպքում: Ի լրումն սրան, հաշվարկվել է տնային տնտեսության անդամների հարստության (ակտիվների) ինդեքսը օգտագործելով հիմնական բաղադրիչների վերլուծություն (principal components analysis), հիմնվելով տնային տնտեսության ակտիվների, ինչպես նաև միավորներ և քվանտիլներ են ներառված եղել տաբուլացիաներում օգտագործված տվյալների բազաներում:

Մուտքագրում իրականացվել է համայնքներում տնտեսություններ այցելելու և դեմառդեմ հարցում անցկացնելու միջոցով, ձեռքով դաշտային աշխ.-ի ժամանակ պլանշետներում, CAPI ծրագրի Suso հավելվածի միջոցով 15 օրվա ընթացքում:

Մուտքագրված հարցաթերթերի առաջնային ստուգում իրականացվել է սուպերվայզերների կողմից, որոնք ըստ անհրաժեշտության համապատասխան մեկնաբանություններով (կապված տվյալների արժանահավատության հետ) վերադարձրել են հաշվարարներին, վերջիններս համապատասխան ճշտումներ կատարելուց կամ մեկնաբանություններ տալուց հետո ներկայացնում էին հարցաթերթը սուպերվայզերին:

Նմանատիպ գործընթաց էր իրականացվում ղեկավար-սուպերվայզեր մակարդակում որը կարելի է համարել հարցաթերթերի երկրորդային ստուգում:

Տվյալների գնահատում

--

Ընտրանքի սխալների գնահատում

Ընտրանքային հարցումների համար լավ պրակտիկա է հաշվել և հրապարակել ընտրանքի սխալները: Այս դաշտը օգտագործվում է տրամադրելու տվյալներ այս հաշվարկների մասին, որոնք ներառում են

- Գործակիցների/ցուցանիշների ցանկ, որոնց համար հաշվարկվել են ընտրանքի սխալները:
- Մանրամասներ ընտրանքի սխալների հաշվարկման համար օգտագործվող ծրագրակազմի վերաբերյալ և հղումներ այն ծրագրերին, որոնք օգտագործվել են (տրամադրվելու են որպես արտաքին ռեսուրսներ) որպես հաշվարկներ կատարելու համար օգտագործվող ծրագիր:
- Հաշվետվությունների կամ այլ փաստաթղթերի հղում, որտեղ արդյունքները կարելի է գտնել (տրամադրվել որպես արտաքին ռեսուրսներ):

Օրինակ՝

Ընտրանքային հետազոտության գնահատականների վրա ազդում են երկու տեսակի սխալներ.


1) ոչ ընտրանքային սխալներ 2) ընտրանքային սխալներ: Ոչ ընտրանքային սխալները տվյալների հավաքման և տվյալների մշակման ընթացքում արված սխալների արդյունքներ են. Մեծ ջանքեր են դրվել 2005-2006 MICS-ի իրականացման ընթացքում մինիմիզացնելու այս տեսակի սխալները, մինչդեռ ոչ ընտրանքային սխալները անհնար է բացառել և վիճակագրորեն դժվար գնահատելի են:

Եթե պատասխանողների ընտրանքը լիներ պարզ պատահական ընտրանք, ապա հնարավոր կլիներ օգտագործել պարզ բանաձևեր ընտրանքի սխալը հաշվարկելու համար: Մինչդեռ 2005-2006 MICS-ի ընտրանքը արվել է բազմափուլ և շերտավորված կերպով և պետք էր օգտագործել ավելի բարդ բանաձևեր: SPSS-ի բարդ նմուշների մոդուլն է օգտագործվել հաշվարկելու 2005-2006 MICS-ի ընտրանքի սխալները: Այս մոդուլը օգտագործում է շեղման գնահատման Թեյլորի գծայնացման մեթոդը՝ հարցման գնահատումների համար, որոնք միջոցներ կամ համամասնություններ են: Այս մեթոդը փաստաթղթավորված է SPSS-ի

Ֆայլի CSDescriptives.pdf-ում, որը կարելի է գտնել Help-ում, SPSS-ում Ալգորիթմներ (Algorithms) տարբերակի տակ:

Ընտրանքի սխալները հաշվարկվել են վիճակագրական տվյալների ընտրված բազայի համար (դրանցից բոլորը համամասնություններ են, պայմանավորված Թեյլորի գծայնացման մեթոդի սահմանափակումերով)՝ ազգային ընտրանքի, գյուղական և համայնքային տարածքների և հինգ ռեգիոնների: Յուրաքանչյուր վիճակագրության, գնահատման, ստանդարտ սխալի, վարիացիայի գործակցի (կամ հարաբերական սխալի -- ստանդարտ սխալի և գնահատման հարաբերակցությունը), նախագծման ազդեցությունը և քառակուսի արմատի նախագծման ազդեցությունը (DEFT – ստանդարտ սխալի (օգտագործելով տրված նախագծված ընտրանքը) հարաբերակցությունը ստանդարտ սխալին, որը կլիներ եթե օգտագործվեր պարզ պատահական ընտրանք), ինչպես նաև 95% վստահության միջակայքեր (+/- ստանդարտ սխալներ):

Ընտրանքի սխալները ներկայացված են հաշվետվության հավելվածում, և ընտրանքի սխալների աղյուսակներում՝ ներկայացված արտաքին ռեսուրսներում:



Տվյալների գնահատման այլ տարբերակներ

Այս բաժինը կարող է օգտագործվել տվյալների հուսալիությունը գնահատելու համար ձեռնարկված ցանկացած այլ գործողության կամ տվյալների որակի վերաբերյալ ցանկացած դիտարկման համար: Այն կարող է ներառել.

- Մարդահամարի դեպքում՝ տեղեկատվություն հետհաշվարկային հետազոտության վերաբերյալ (հաշվետվությունը պետք է ներկայացվի արտաքին ռեսուրսներում և նշվի այստեղ):
- հարցումը հետազոտության/մարդահամարի համար՝ համեմատություն մեկ այլ աղբյուրի տվյալների հետ:
- եւ այլն

Օրինակ.

Տվյալների որակի աղյուսակների և գրաֆիկների շարքերը հասանելի են վերանայելու համար տվյալների որակը և ներառում են հետևյալը

- Տնտեսության բնակիչների տարիքային բաշխվածությունը
- Համապատասխանող կանանց և հարցված կանանց տարիքային բաշխվածությունը
- Համապատասխանող երեխաների և այն երեխաների ում մասին մայրը կամ խնամողը հարցվել է
- 5 տարեկանից փոքր երեխաների տարիքային բաշխվածությունը, երեք ամսյա խմբերով
- Տարիքի և ժամանակահատվածի հարաբերակցությունը համապատասխանության սահմաններում
- Դիտարկումների այն %-ը, որի մասին տվյալները բացակայել են ընտրված փոփոխականների դեպքում:

Այս տվյալների որակի աղյուսակների արդյունքները կարելի է գտնել վերջնական հաշվետվության հավելվածում, ինչպես նաև այն տրված է արտաքին ռեսուրսների բաժնում:

Բացակայող տվյալներ դաշտային հաշվետվության տաբուլյացիաներում ներկայացնելու ընդհանուր կանոնը այն է, որ որպես բացակայող սյուն է ներկայացվում, եթե տվյալների 1% կամ ավելին բացակայում է: Եթե ֆոնային բնութագրիչների տվյալներն են բացակայում (օր. կրթությունը) ապա նման դեպքում դրանք ներառվում են աղյուսակի մեջ, բայց բացակայող տողերի մասին նշումները երևում են հաշվետվության աղյուսակների ներքևի հատվածում (սակայն ոչ SPSS-ի արդյունքում)

--

Կոնտակտներ

**Կոնտակտային անձ: անուն, ազգանուն, պատկանելիություն,
ընդհանուր/պաշտոնական նամակ (ոչ անձնական)**

ՀՀ վիճակագրական կոմիտե
Հապավումը՝ Արմստատ

Արսեն Ավագյան

Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի
պետ

agriculture@armstat.am